ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 2 *Общественные науки*

Ս. Խալեյան

ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

1943—1944 թ. թ.[1]

Հայրենական պատերազմի ծանր օրերին, ընկեր Ստալինը 1941 թ. հուլիսի 3-ի իր ռադիո ելույթում շարադրելով սովետական ժողովրդի պայքարի ծրագիրը ֆաշիստական Գերմանիայի բանակների դեմ, Թշնամու թիկունքում պարտիզանական պայքարի կազմակերպման համար հետևյալ ցուցումը տվեց. «Թշնամու գրաված շրջաններում պետք է ստեղծել հեծյալ ու հետիոտն պարտիզանական ջոկատներ, ստեղծել դիվերսիոն խմբեր Թշնամու բանակի զորամասերի դեմ կռվելու համար, պարտիզանական պատերազմը բորբոքելու համար ամեն տեղ ու ամենուրեք, կամուրջները, ճանապարհները պայթեցնելու, հեռախոսային ու հեռագրական կապը փչացնելու համար, անտառները, պահեստները, զումակները հրկիզելու համար։ Գրավված շրջաններում ստեղծել Թշնամու և նրա բոլոր աջակիցների համար անտանելի պայմաններ, հետապնդել և ոչնչացնել նրանց ամեն քայլափոխում, վիժեցնել նրանց բոլոր միջոցառումները»։[2]

Ընկեր Ստալինի կոչով, Կարմիր Բանակի հրամանատարության օգնությամբ, օկուպացված շրջանների ընդհատակյա պարտիական կազմակերպությունների ջանքերով, ժողովուրդը ոտքի կանգնեց մասսայական պարտիզանական կռվի։ Սովետական ժողովուրդն իր ամբողջ հասակով բարձրացավ գերմանական բռնադատիչների դեմ։ Պարտիզանները, որոնք ժողովրդական վրիժառուների պանծալի անուն ստացան, իրենց նպատակ էին դրել օգնել Կարմիր Բանակին՝ ջախջախելու, դուրս շպրտելու գերմանական զավթիչներին սովետական տերիտորիայից, տապալելու նրա ատելի լուծը և ազատելու ժողովուրդներին ֆաշիստական ստրկությունից։

Իր ժողովրդականությամբ, լայն մասշտաբով և իդեականությամբ, հայրենական այս պատերազմում պարտիզանական շարժումն անհամեմատ ավելի բարձր աստիճանի վրա էր կանգնած, քան մինչև այդ գոյություն ունեցող պարտիզանական շարժումները։ Օկուպացված շրջանների սովետական բնակչության մեծ մասը կամ անմիջապես գտնվում էր պարտիզանական ջոկատներում, կամ ակտիվ կերպով օգնում էր պարտիզանական շարժմանը։

Պարտիզանական շարժման ծավալումով կրախի ենթարկվեց նաև գերմանացիների այն կեղծ «թեորիան», որ իբր թե բարձր տեխնիկայի ներկա

---

[1] *Զեկուցված է ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի գիտական սեսիայում, 1946 թ. նոյեմբերի 15-ին։*

[2] *Ի. Վ. Ստալին—Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին, 1948, էջ 16։*

դարում, ժամանակակից ռազմական սպառազինությամբ հագեցված բանակների կողմից օկուպացված տերիտորիաներում անհնար է պարտիզանական շարժումը։ Սովետական պարտիզաններն իրենց գործողություններով հակառակը ցույց տվին։ Հայրենիքի սերը, ատելությունը դեպի թշնամին, ֆաշիզմը ոչնչացնելու սովետական ժողովրդի ձգտումը առաջացրին մի ահեղ պարտիզանական շարժում, որը դարձավ գերմանական զավթիչներին ջախջախելու կարևոր պայմաններից մեկը։

Պարտիզանական շարժումը լայն ծավալ ստացավ օկուպացված Ուկրաինայում։ Այդ շարժումը ղեկավարում և նրան ուղղություն էր տալիս ուկրաինական պարտիզանական շարժման շտաբը, մեծ Ստալինի մերձավոր զինակից, Ուկրաինական բոլշևիկների ղեկավար Ն. Ս. Խրուշչևի գլխավորությամբ։

Վերածնվեցին քաղաքացիական պատերազմի ժամանակվա ուկրաինական պարտիզանների պանծալի տրադիցիաները։ Պատերազմի հենց սկզբից ժողովրդի ծոցից դուրս եկան բազմաթիվ անվանի խիզախ պարտիզաններ և պարտիզանուհիներ, պարտիզանական ջոկատների ղեկավարներ, որոնց հերոսական գործերի մասին ժողովուրդն այժմ երգեր ու առասպելներ է հյուսել։ Անմոռանալի են ուկրաինական պարտիզանական խոշոր միավորումների հրամանատարների, Սովետական Միության կրկնակի հերոսներ գեներալ-մայոր Կովպակի, պարտիզանական կոմիսար Ֆեոդորովի, Սովետական Միության Հերոս գեներալ-մայոր Նաումովի և տասնյակ մյուս ղեկավարների ու շարքայինների անունները, որոնք պատերազմի ամբողջ ընթացքում գործելով գերմանական բանակների թիկունքում, տասնյակ հազարավոր կիլոմետրեր արշավներ և ռեյդեր են կատարել օկուպացված տերիտորիաներում։ Նրանք անողոք վրեժ էին լուծում թշնամուց, ավերում էին նրա բանակի կոմունիկացիաները, վիժեցնում էին նրա բոլոր ձեռնարկումները, ստիպում էին հիտլերականներին մեծ ուժեր պահելու թիկունքում՝ կոմունիկացիաների պաշտպանության և պարտիզանների դեմ կռվելու համար։

1944 թ. մարտի 1-ին, Կիևում, Ուկրաինական Գերագույն Սովետի 6-րդ սեսիայում, իր ղեկուցման մեջ Ն. Ս. Խրուշչևը ամփոփելով Ուկրաինական պարտիզանական շարժման արդյունքները, հաղորդեց հետևյալը. «Պատերազմի սկզբից մինչև 1944 թ. փետրվարի 15-ը, միմիայն այն տեղեկություններով, որ ունի իր տրամադրության տակ Ուկրաինայի պարտիզանական շարժման շտաբը, Ուկրաինայի պարտիզանները բնաջնջել են հակառակորդի ավելի քան 175 հազար զինվոր ու սպա։

Մեր պարտիզանները ոչնչացրել և վնասել են 2331 էշելոն, 2330 շոգեքարշ, 21 զրահագնացք, 24121 վագոն, 64 օդանավ, 527 տանկ և զրահամեքենա, 30 գետային նավ, պայթեցված է 792 երկաթուղային և խճուղային կամուրջ։

Ուկրաինական սովետական պարտիզանները գրավել և պահել են մինչև Կարմիր Բանակի զորամասերի մոտենալը՝ Դնեպրի, Դեսնայի և Պրիպյատի 25 գետանցուղի, գրավել են 16 ռայոնական կենտրոն՝ Ժիտոմիրյան, Ռովենյան, Վոլինյան և Կամենեց-Պոդոլսկյան մարզերում։

Մենք հպարտանում ենք մեր խիզախ պարտիզանների և պարտիզա-

նուհիների պայքարով։ Հպարտանում ենք պարտիզանական ջոկատների հերոսական արշաւներով և ռեյդերով։[1]

Ուկրաինական փառապանծ պարտիզանների շարքերում, թշնամու դեմ հերոսաբար մարտնչում էին Սովետական Միության ժողովուրդների շատ ներկայացուցիչներ։ Ընկեր Խրուշչեվի թվարկած՝ ուկրաինական պարտիզանների գերմանական դավթիչներին հասցված ջախջախիչ հարվածների մեջ իրենց համեստ բաժինն ունեն նաև հայ ժողովրդի անձնուրաց զավակները, թշնամու թիկունքում օկուպացված Ուկրաինայում գործած հայ պարտիզանները։ Հայտնի են հայկական պարտիզանական ջոկատների մարտական սխրագործությունները Սովետական Միության օկուպացված տերիտորիաներում, սովետական տերիտորիայից դուրս՝ Ֆրանսիայում, Հունաստանում, Բուլղարիայում, Հարավսլավիայում, Իտալիայում, Չեխոսլովակիայում և այլուր։

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում մարտական փառավոր ուղի անցած, ընկեր Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը, որն ամբողջ Ուկրաինայում իր կազմով միակ ազգային պարտիզանական ջոկատն էր։ Միկոյանի անվան պարտիզանական ջոկատի անձնակազմը հիմնականում բաղկացած էր գերմանական գերությունից ճողոպրած հայ կարմիրբանակայիններից և սպաներից, որոնք 1941—1942 թվականներին Կերչի, Սևաստոպոլի, Կովկասի պաշտպանության, Խարկովի տակ տեղի ունեցած արյունահեղ մարտերի օրերին, վիրավոր վիճակում կամ դեկավարությունից կտրված, ծանր պայմաններում գերի էին ընկել գերմանացիների ձեռքը։

1942 թվին հիտլերականները Լեհաստանի մի շարք քաղաքներում կազմակերպել էին սովետական ռազմագերիների համակենտրոնացման մեծ ճամբար, ուր գործադրվում էր ծեծի, տանջալից սովի, գանդաղ մահացման քաղաքականությունը։ Գերիները մասսայաբար բնաջնջվում էին։ Չնայած այդ պայմաններին, գեստապոյի դաժան հետապնդումներին, գերի սպաների և ակտիվ մի շարք ընկերների նախաձեռնությամբ ճամբարում ստեղծվում է սովետական հայրենասերների ընդհատակյա կազմակերպություն, որը լայն ագիտացիոն աշխատանքներ է ծավալում գերիների մեջ, լեհական պարտիզանների միջոցով ձեռք բերում և մասսայականացնում էր Սովինֆորմբյուրոյի հաղորդումները կարմիր Բանակի հաղթանակների մասին և ամեն միջոց ձեռք առնում միշտ վառ պահելու գերիների սրտում հաղթանակի հավատը։

Գերմանացիները, սովետա-գերմանական ռազմաճակատներում կրած ծանր պարտությունների և կորուստների հետևանքով, մարդկային ռեզերվների սուր պակասություն զգացին, ուստի նրանք սկսեցին բռնի միջոցներով սովետական ռազմագերիներից հավաքագրել հատուկ զորամասեր գերմանական զինվորական իշխանությունների խիստ հսկողության տակ, ռազմական բեռների տեղափոխման աշխատանքներում և թիկունքային կայազորներում ներքին պահակային ծառայության մեջ օգտագործելու համար։ Այդ կարգով 1943 թ. սեպտեմբերին Լեհաստանի Գուլավի քաղաքի

[1] *И. С. Хрущев*—Освобождение украинских земель от немецких захватчиков и очередные задачи восстановления народного хозяйства Советской Украины. ОГИЗ 1944 г., стр. 12—13.

ճամբարից հայ ռազմագերիներից կազմված լեգեոնի մեկ վաշտ փոխադրեցին Ուկրաինա և տեղավորեցին Ժիտոմիրի մարզի Պոտիեկա շրջանային կենտրոնում՝ օկուպացիոն զանազան ծանր աշխատանքներում օգտագործելու, անգամ փորձեր կատարվեցին նրանց դուրս բերելու պարտիզանների դեմ կռվելու համար։

Բայց գերմանական զավթիչները չարաչար սխալվեցին իրենց հաշիվներում։ Վաշտի ներսում սովետական հայրենասերների գաղտնի կազմակերպության ղեկավարները անմիջապես կապվում են տեղի ուկրաինական ընդհատակյա պարտիական կազմակերպությունների հետ։ Վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Արամայիս Հովսեփյանի, քաղղեկ Սուխարիչ Հարությունյանի, ջոկի հրամանատարներ Սերգեյ Սայանի և Գարեգին Բաղդասարյանի ջանքերով, վաշտի անձնակազմը նախապատրաստվում է գերմանական զենքերով կազմակերպված անցում կատարելու և միանալու այդ օրերին Ժիտոմիրի մարզի Պոտիեկայի շրջանում Սովետական Միության Հերոս, գեներալ-մայոր Նաումովի հրամանատարությամբ գործող հեծյալ պարտիզանական միավորման հետ։ Նաումովի պարտիզանները տեղյակ լինելով վաշտի գիտավորության մասին, սեպտեմբերի 12-ին ընդհուպ մոտենում են Պոտիեկային։

Գեոմանական կայազորի հրամանատարությունը տեղեկություն ստանալով պարտիզանների երևալու մասին, փորձում է Հովսեփյանի վաշտը հարձակման ուղարկել պարտիզանների դեմ։ Վաշտը դուրս է բերվում գյուղից, սակայն մարտիկները, իրենց հրամանատարի կողմից նախապատրաստված լինելով գերմանացիներին խաբելու համար, անկանոն կրակ են բաց անում օդում և իրենց դիրքերում՝ մնալով, անհամբեր սպասում են հարմար մոմենտի՝ պարտիզանների կողմն անցնելու համար։

Կայազորի կողմից վաշտին ուղեկցող գերմանակոն սպան նկատելով այս բացարձակ «սաբոտաժը», փորձում է ղեկավարել վաշտի մարտական գործողությունները, հրամայում է ուժեղ կրակ բաց անել և հարձակման անցնել։ Վաշտը կատեգորիկ կերպով հրաժարվում է այդ հրամանը կատարելուց։ Հովսեփյանն իր վաշտը ետ է տանում, պատճառաբանելով, որ դիմացը պարտիզաններ չկան։

Դեպքերի անհաջող դասավորությամբ այդ օրը վաշտին չի հաջողվում անցնել պարտիզանների կողմը։

1943 թ. սեպտեմբերի 15-ին Պոտիեկա են գալիս Ժիտոմիրի գերմանական ժանդարմերիայի և կայազորի հրամանատարության ներկայացուցիչները ըմբոստացած վաշտի հրամանատարին ու բանակայիններին ձերբակալելու և պատժելու համար։ Ամբողջ վաշտը սպառազինված, մեկ մարդու նման կանգնում է իր հրամանատարների շուրջը և թույլ չի տալիս ժանդարմերիայից ոչ մեկին մոտենալու վաշտի զորանոցին։

Գերմանացիները զգուշանալով ավելի լուրջ միջադեպից և տեղում բավարար ուժեր չունենալով, ձերբակալությունը հետաձգում են։

Այդ դեպքից անմիջապես հետո, նույն օրը, Հովսեփյանը ջոկի հրամանատար Սուխարիչ Հարությունյանին հանձնարարում է գիշերը իր մարտիկներով աննկատելիորեն դուրս գալ Պոտիեկայից և դիշերվա ժամը 12-ին «կրակի տակ առնել տեղանքը՝ կայազորի վրա պարտիզանների հարձակման տպավորություն ստեղծելու համար», որպեսզի այդ պատրվա-

կով հնարավոր լինի վաշտը գյուղից դուրս բերել, իբր թե մարտի, և իրականացնել պարտիզանների կողմն անցնելու ծրագիրը։ Միաժամանակ մյուս շոկերի հրամանատարներին կարգադրում է, որքան հնարավոր է, շատ սպառազինություն և ռազմամթերք վերցնել կայազորից։

Ճիշտ նշանակված պահին, գիշերվա ժամը 12-ին, Սուխարիչ Հարությունյանի ջոկը սկսում է իր գործողությունը, մեծ իրարանցում առաջացնելով գերմանական կայազորում։ Այդ շփոթի մեջ Հովսեփյանը 228 հոգուց բաղկացած իր վաշտը կարգի բերելով, գերմանական կայազորի հրամանատարության աչքի առաջ պարտիզանների դեմ դրոհելու պատրվակով, բնակավայրից դուրս է բերում վաշտը և հայտնում է մարտիկներին պարտիզանների կողմն անցնելու իր որոշումը։ Մարտիկները, որոնք արդեն տեղյակ էին անցման դիտավորությանը, խանդավառությամբ են ընդունում այդ որոշումը։

1943 թ. սեպտեմբերի 16-ին Շեչենկո և Դերմանկա գյուղերի մոտ հայկական վաշտը միանում է Սովետական Միության Հերոս, գեներալ-մայոր Նաումովի պարտիզանական միավորմանը, իր հետ տանելով 2 հաստոցավոր, 11 ձեռքի գնդացիրներ, 3 ականանետ, 168 հրացան, 54 ատրճանակ, 20 հազար փամփուշտ, անհրաժեշտ քանակությամբ հանդերձանք և սպառազինություն։

Հենց նույն օրը պարտիզանական միավորման հրամանատարությունը մարտական առաջադրանք է տալիս վաշտին—ջախջախել Պոտիեկայի գերմանական կայազորը և գրավել բնակավայրը։

Հայ մարտիկները, ատելությամբ լցված դեպի գերմանական օկուպանտները, սեպտեմբերի 16-ի գիշերը, առանց հանգստանալու, հարձակման են անցնում թշնամու կայազորի վրա։ Լավ ծանոթ լինելով տեղանքին, նրանք մեծ հաջողությամբ ճնշում են թշնամու կատաղի դիմադրությունը։ Սեպտեմբերի 17-ի առավոտյան ժամը 5-ին գլխովին ջախջախելով կայազորը, գրավում են Պոտիեկան։ Շարքից դուրս են հանում գերմանական զորանոցները, հեռագրի, հեռախոսի կայանները, ռադիոհանգույցը, յուղի գործարանը, դինվորական պահեստները և այլն։ Վաշտի կորուստները կազմում են մեկ սպանված և ութ վիրավոր։

Այդ մարտում հերոսի մահով զոհված, դասակի հրամանատար Վահան Աբովյանի (Իջևանի շրջանի Կոթի գյուղացի) թարմ շիրիմի առաջ հայ պարտիզանները մարտական երդում են ընդունում, կռվել մինչև արյան վերջին կաթիլը, մինչև գերմանական զավթիչների վերջնական ջախջախումը։ Այդ նույն օրը պարտիզանական միավորման շտաբի հրամանով կազմակերպվում է հայ պարտիզանական ջոկատը. հայ մարտիկների խնդրիքով ջոկատին շնորհվում է Մեծ Ատալինի մարտական զինակից, հայ ժողովրդի արժանավոր դավակ Անաստաս Միկոյանի անունը։ Ջոկատի հրամանատար է նշանակվում ավագ լեյտենանտ Արամայիս Մելիքի Հովսեփյանը, կոմիսար՝ ավագ քաղղեկ Յուրիյ Աֆանասևիչ Պավլովսկին, պարտկազմակերպիչ՝ Ժորա Բաղդասարյանը։

Ջոկատի անձնակազմի սկզբնական թիվը հասցվում է մինչև 234 մարդու, որից մեծ մասը հայեր էին։ Ջոկատի կոմպլեկտավորումից ու դրանցումից հետո, պարտիզանական միավորման հրամանատար, Սովետական Միության Հերոս, գեներալ-մայոր Նաումովը «Քրուշչևի», «Զապաեի»,

«Զերվոնին», «Կիևյանն» և մյուս ջոկատների ընդհանուր հավաքի միտինգում ընդունելով «Միկոյանի» անվան ջոկատը, ջերմորեն ողջունում է հայ պարտիզաններին և բարձր գնահատական է տալիս նրանց մարտական որակին։ Այդ օրվանից սկսվում են հայ պարտիզանական ջոկատի մարտական գործողությունները գերմանական օկուպանտների դեմ՝ Սովետական Ուկրաինայի ազատագրման համար։

1943 թ. սեպտեմբերի 18-ին Մայդանովկա գյուղից դուրս գալուց հետո, Ռակի խուտորում, պաշտպանության աջ թևում, Միկոյանի անվան ջոկատի երկրորդ վաշտը մարտի մեջ է մտնում միավորմանը հետապնդող գերմանական հետևակային բատալիոնի դեմ։ Համառորեն պաշտպանելով իրենց դիրքերը, հայ պարտիզանները ետ են շպրտում հիտլերականների կատաղի գրոհները և ոչնչացնելով երկու ավտոմեքենա ու 20 հիտլերական, ստիպում են հակառակորդին հրաժարվելու միավորմանը հետապնդելուց։

Մյուս օրը ջոկատը ամբողջ գիշերը պաշտպանում է Բունի-Բուչի-Միչովկա գյուղերի միջև գտնվող աերոդրոմը, որտեղ պետք է ընդունվեր ուկրաինական պարտիզանական շտաբից միավորման համար յոթ ինքնաթիռով ուղարկված սպառազինություն և պետք է վիրավորները փոխադրվեին սովետական թիկունքը։ Գերմանացիները տեղեկանալով այդ մասին, առավոտյան, մոտ 400 զինվորով, հրանոթների տեղատարափ կրակի պաշտպանությամբ, հարձակվում են աերոդրոմի վրա։ Միկոյանտկանները մեկ և կես ժամվա համառ մարտերում ոչնչացնելով 70 հիտլերականների և աերոդրոմում իրենց աշխատանքները ավարտելուց հետո, հրամանի համաձայն, հեռանում են դիսլոկացիայի նոր վայրը։ Այդ առաջին իսկ մարտերում հայ պարտիզաններն աչքի են ընկնում միավորման շարքերում իրենց ռազմական և քաղաքական լավագույն հատկություններով։ Պարտիզանական «Նարոդնի կլիչ» թերթը սկսում է իր էջերում սիստեմատիկաբար լուսաբանել Միկոյանի անվան ջոկատի մարտական սխրագործությունները։ 1943 թ. սեպտեմբերի 20-ին վերոհիշյալ թերթում լույս տեսած «Զենքերը դարձրին գերմանացիների դեմ» հոդվածում, ջոկատի կոմիսար Պավլովին գրում էր. «Մեկ ազգություն մյուսի դեմ ուզդելու հիտլերյան քաղաքականությունը ձախողվեց։ Վաշտի մարտիկները, նախկին կարմիրբանակայիններ, ռազմագերիներ, մտնելով հայկական լեգեոն, միմիայն երազել են այն մասին, որպեսզի հարմար ժամին անցնեն Կարմիր Բանակի կողմը և այն զենքը, որ ստացել են գերմանացիներից, դարձնեն նրանց դեմ, և հասավ այդ ժամը։ Հայրենիքի պաշտպանների շարքերում նորից կանգնեցին նրա զավակները։ Հետևյալ իսկ օրը վաշտը մարտի մեջ մտավ ջախջախելու Պոտիևկայի կայազորը, որի կազմի մեջ ինքն էլ էր մտնում։ Գործողությունը կատարվեց փայլուն, թշնամին դուրս մղվեց ամրություններից և Պոտիևկան գրավվեց։ Երիտասարդ պարտիզանները խիզախորեն էին մարտնչում Ռակի գյուղի մոտ։ Հերոսների մահով զոհվեցին մարտիկներ Աբաջյանը և Բակունցը։ Կասկած չկա, որ Միկոյանի անվան ջոկատի պարտիզանները գալիք մարտերում ևս ցույց կտան իրենց նվիրվածությունը Հայրենիքին»։

1943 թ. հոկտեմբերի սկզբներին, երբ Կարմիր Բանակի զորքերը Կիևի ուղղությամբ անցնում են Դնեպր գետը, իրադրությունն այնպես է դասավորվում, որ թշնամին պիտի նահանջեր Նաուժովի պարտիզանական միավորման

գրաված տերիտորիայով։ Այդ օրերին հակառակորդը մեծ ուժեր է կենտրոնացնում Կորոստենում, Զապովիչում և Տուրչենկայում, նպատակ ունենալով պարտիզաններին դուրս քշելու Մալին-Ռոդոմիշլ-Ժիտոմիրի շրջաններից, ապահովելով իր թիկունքը։ Այդ նույն ժամանակ պարտիզանական շարժման ուկրաինական շտաբի հրամանը պարտավորեցնում էր Նաումովի միավորմանը՝ մնալ իր ռայոնում և գործել մինչև Կարմիր Բանակի գալը։

Միկոյանի անվան ջոկատին հանձնարարվում է գործել Կորոստեն-Տուրչենկա-Մալին եռանկյունում, խնդիր ունենալով թույլ չտալ օկուպանտներին Գերմանիա քշելու սովետական խաղաղ բնակչությանը, հացահատիկը, անասունները և ժողովրդի ունեցվածքը։ Հսկել երկաթգծի և խճուղիների վրա, ամեն կերպ կտրել թշնամու նահանջի ճանապարհը, կատարել ակտիվ դիվերսիոն ակտեր։

Միկոյանի անվան ջոկատի մարտիկները և սպաները վայելուն կերպով էին կատարում իրենց խնդիրները։ Լայն բացատրական աշխատանքներ էին տանում բնակչության մեջ, մասսայականացնում էին ընկեր Ստալինի հրամանները և դեկուցումները, Կարմիր Բանակի հաջողությունների մասին եղած հաղորդումները։ Ֆրոնտի մոտենալու կապակցությամբ, թիկունքի բնակչությանը կոնկրետ ցուցումներ էին տալիս նրանց անելիքների մասին, զգուշացնում էին հացը դաշտից գյուղ տեղափոխել, երբ գերմանացիները մոտենում էին գյուղին, ջոկատի մարտիկները գյուղացիներին օգնում էին բոլոր անասունները անտառ քշել՝ թաքցնելու համար։ Ամեն կերպ օգնում գերծ պահելու ժողովրդական ունեցվածքը թշնամու նահանջող բանակի ավերումներից ու հափշտակումներից։

Այդ ժամանակաընթացքում ջոկատը մի շարք լուրջ մարտեր մղեց Զլորիչ գյուղի մոտ, Իրշա գետի վրա, ջախջախեց վլասովական կազակների մեկ բատալիոն, դեպի ռազմաճակատի գիծն ուղևորվող գերմանական մի քանի զորամասեր և տրանսպորտ։ Այդ մարտերում ջոկատը հակառակորդին պատճառեց մեծ կորուստներ՝ 134 սպանված, 18 վիրավոր, պայթեցրեց 5 կամուրջ և գրավեց շատ ռազմաավար և սպառազինություն։

1943 թ. հոկտեմբերի 11-ին գերմանական օկուպացիոն զինվորական իշխանությունները ամենուրեք հրամաններ էին արձակել շրջապատել և ոչնչացնել Նաումովի միավորումը։ Հիտլերականների խոշոր ուժերը բոլոր կողմերից սկսեցին շրջապատել պարտիզանական ջոկատների գործողությունների հատվածները՝ գյուղերը, անտառները, ճանապարհները, քայլ առ քայլ հետապնդում էին պարտիզաններին։ Պարտիզանական շարժման ուկրաինական շտաբը նկատի ունենալով միավորման համար ստեղծված սպառնալից դրությունը, Նաումովին առաջարկում է Կիևի շրջանից անցնել ռազմաճակատի գիծը և միանալ գործող Կարմիր Բանակի զորամասերին։

Միավորումն իր ջոկատներով անցնում է այդ հրամանի կատարմանը։ Հոկտեմբերի 19-ին, ժամը 14-ին փորձեր էր կատարում Միժերիչկայի մոտով անցնել Տետերև գետը։ Այդ օպերացիայում Միկոյանի անվան ջոկատին հանձնարարվում է պաշտպանել զորամասի գետանցումը։ Հիտլերականները տեղեկանալով ճակատի գիծն անցնելու մասին, հետևակի երկու բատալիոնով, զենքերի բոլոր տեսակների մրրկալի կրակի պաշտպանությամբ, դրոհի են անցնում գետանցման պաշտպանության վրա։ Չնայած հակառակորդի ուժերի թվական գերազանցությանը և անընդհատ կրկնվող

Նրանց համառ գրոհներին, Միկոյանականները ամուր պահում են իրենց դիրքերը և հակագրոհի նետվելով, մի քանի անգամ անցնելով ձեռնամարտի, մեծ կորուստներ պատճառելով հակառակորդին ետ են շպրտում նրան իր ելման կետը։ Պաշտպանության հիմնական գծերում տեղի էր ունենում իսկական բանակային ընույթի մարտեր, կովի դաշտը մի քանի անգամ անցնում էր ձեռքից ձեռք։ Տեսերև գետի վրա շահելով մարտը, հայ պարտիզանները ցույց տվին կայունության և անձնազոհության հերոսական օրինակ։ Այդ օրը թշնամին կորցնելով 100-ից ավելի սպանված և շատ սպառազինություն, հուսահատված հեռացավ մարտադաշտից։

Միկոյանի անվան ջոկատը տալիս է 9 սպանված, 12 վիրավոր ու անհետ կորած։ Այդ մարտում հերոսի մահով զոհվում է ջոկատի կոմիսար Ցուրիյ Պավլովսկին։

Անցնելով գետը, թափանցելով Կոդրինյան անտառը, Միկոյանի անվան ջոկատի փորձված հետախույզներն սկսում են ֆրոնտի գիծն անցնելու հարմար տեղեր որոնել, բայց այստեղ հայտնի է դառնում, որ Ժիտոմիրի գերմանական կայազորը տեղյակ լինելով պարտիզանների անցման մասին, երեք հետևակային բատալիոնով, հրետանու, ականանետային մեծ ուժերով, 20 տանկերի ուղեկցությամբ, պատժիչ արշավախումբ է ուղարկել և փակել Կոդրինյան անտառի դեպի ֆրոնտի գիծը տանող բոլոր ճանապարհները, դարաններ է պատրաստել Նաումովի միավորումը լիկվիդացնելու համար։

Իրադրության բարդությունը, ռազմաճակատի գիծն անցնելու դժվարությունները նկատի ունենալով, Նաումովի միավորման հրամանատարությունը որոշում է ընդունում—գնալ ետ դեպի արևմուտք, թշնամու խորը թիկունքում շարունակել պարտիզանական պայքարը։

* * *

1943 թ. վերջերին Կարմիր Բանակի հարձակումները օրեցօր ծավալվում և մեծ չափերի էին հասնում։ Պարտված թշնամին ետ շպրտվելով, վիրավոր գազանի կատաղությամբ, հրեշավոր չարագործություններ էր կատարում Սովետական օկուպացված տերիտորիաներում։

Ընկեր Ստալինը արտակարգ հոգատարությամբ զինելով և հանդերձավորելով պարտիզաններին, պարտիզանական շարժման առաջ խնդիր էր դնում՝ թափանցել թշնամու խոր թիկունքը, սերտորեն կապվել բնակչության հետ, օգնել, ոտքի հանել նրանց արդար հատուցման պայքարի, օժանդակել Կարմիր Բանակի առաջշարժմանը և հարձակման նախաձեռնությունը պարտիզանների ձեռքում պահելու և անորսալի մնալու համար, ընկեր Ստալինն առաջարկում էր կիրառել ռեյդի (արշավի) տակտիկան, հաճախակի փոփոխելով հարվածների և մարտական գործողությունների շրջանը։ Ինչպես հայտնի է, ռեյդի գաղափարն ընկեր Ստալինը առաջ էր քաշել դեռևս 1942 թ. օգոստոսի վերջերին Մոսկվայում հրավիրված պարտիզանական միավորումների հրամանատարների խորհրդակցության ժամանակ, երբ նա առաջարկություն էր անում, Ռնեպրի աջափնյա տերիտորիաներում բարձրացնելու պարտիզանական կովի դրոշը, այդ առաջին ռեյդը, որ ստացավ Ստալինյան փառապանծ անունը, իրականացվեց Սովետական Միության կրկնակի հերոս, գեներալ-մայոր Կովպակի կողմից, որը հաղթահարելով

անասելի դժվարությունները, իր միավորումով անցավ 10.000 կիլոմետր ճանապարհ, հասավ մինչև Կարպատյան լեռները։ Կովպակը իր „От Путивля до Карпат“ աշխատության մեջ հիշելով Մոսկվայի խորհրդակցության մասին, ասում է. «Մեզ ճանապարհելիս՝ հրաժեշտի պահին, ընկեր Ստալինն ասաց. Գլխավորը, ընկերներ, ժողովրդի հետ ամուր կապ պահպանեցեք և ձեռքի շարժումով ցույց տալով սեղանի շուրջ նստած մեզ բոլորիս, ժպտալով ասաց։ Առայժմ դուք մեր երկրորդ ճակատն եք»[1]

Գեներալ-մայոր Նաումովի հեծյալ պարտիզանական միավորումը 1943 թ. նոյեմբերի սկզբներից սկսեց իր առաջին մեծ ռեյդը։ Այդ ընթացքում Միկոյանի անվան ջոկատը ակտիվ գործողություններով ընթանում էր կամ ավանգարդում, իբրև հարվածող ջոկատ, կամ միավորմանը հետապնդող թշնամու հարվածներից պաշտպանող արիերգարդ։

Կոզրինյան անտառից դեպի արևմուտք շարժվելու ժամանակ, Միկոյանի անվան ջոկատը մանրամասն հետախուզելով հակառակորդին, իր շարժման ուղղությամբ, մարտերով ճանապարհ էր հարթում միավորման համար։ Անցնելով հակառակորդի դարանների և կայազորների միջից, նա միավորմանը դուրս բերեց Ջամբրի-Դերմանկայի շրջանը։ Նոյեմբերի 1-ին հետախուզությունը տեղեկացնում է, որ դարձյալ Մալինից, Ռոզոմիշլից և Կորոստենից հիտլերականների պատժիչ մեծ ուժեր են գալիս դեպի արևմուտք շարժվող Նաումովի միավորման վրա։ Թուլացնելով նրանց հանդիպելուց, Միկոյանի անվան ջոկատը հինգ օր ու գիշեր իր ճանապարհին հանդիպած Րիշևկա, Բելա, Բանդարևկա, Ժուբրովիչ, Զուրկովիչ գյուղերի գերմանական կայազորների դեմ համառ մարտեր մղելով, մի քանի անգամ օդից ուժեղ ռմբակոծման ենթարկվելով, նոյեմբերի 6-ին, տանջալի և դժվարին երթից հետո, հաջողվում է դուրս գալ և կարճ ժամանակով կտրվել հակառակորդի հետապնդումներից։ Այդ մարտերին մշտապես նախաձեռնակ լինելով, Միկոյանականները ոչնչացրին ավելի քան 200 հիտլերական, գրավեցին շատ ռազմավավար, կորուստ ունեցան մեկ սպանված և երկու վիրավոր։ Նոյեմբերի 14-ին դարձյալ վերսկսվում են մարտերը։ Միկոյանի անվան ջոկատը սրընթաց հարձակումով գրավելով Էմելչինո գյուղը, նոյեմբերի 17-ին իր հետախուզական ջոկի միջոցով, փորձված հետախույզ Մուկուչ Կարապետյանի և Ժորա Բաղդասարյանի հրամանատարությամբ, Ստեպանովկա գյուղի շրջանում և ճանապարհի վրա մի քանի օր շարունակ ավերում են թշնամու կապի և հաղորդակցության միջոցները, դարանից հրդեհում են ճակատի գիծն ուղևորվող գերմանական ավտոմեքենաները և նրանց անձնակազմը։ Այդ ժամանակաընթացքում պայթեցնում են 10—20 մետր երկարություն ունեցող 13 փայտյա կարևոր կամուրջներ և այլն։

Դեկտեմբերի 5-ին, Էմելչինոյից դուրս շպրտված թշնամին, համալրելով իր ուժերը, 300 հոգուց բաղկացած հետևակով, երեք տանկի, 4 գրահամեքենայի և 122 միլիմետրանոց հրանոթի ուժեղ կրակի պաշտպանությամբ, հարձակման են անցնում Նաումովի միավորման վրա։ Մարտի մեջ են մտնում «Զերվոնի», «Կիևյան» ջոկատները։ Միկոյանի անվան ջոկատը իր վաշտերով, թշնամու կողմից շրջապատման սպառնալիքի պայմաններում, համառ պաշտպանողական մարտեր մղելով՝ հնարավորություն է

[1] С. А. Ковпак—„От Путивля до Карпат", ОГИЗ, 1945 г., стр. 85.

տալիս իր հարևան ջոկատներին գյուղից դուրս գալու։ Մեկ ժամ տևող համառ մարտերում, հիտլերականները կորցնելով ավելի քան 30 սպանված, հրաժարվում են միավորմանը հետապնդելուց։

Հասնելով Սլուչ գետի ձախ ափին, միավորման համար ստեղծվում են նյութական ծանր պայմաններ։ Սլուչ գետի ձախափնյա բնակչությունը, թալանված լինելու պատճառով, կենսամթերքով չէր կարող օգնել պարտիզաններին, բացի այդ, անհրաժեշտ էր կուտակված վիրավորներին սովետական թիկունք փոխադրել, զենք և ռազմամթերք ձեռք բերել։ Այդ ժամանակ ուկրաինական պարտիզանական շարժման շտաբի կողմից միավորմանը առաջարկվում է՝ ջոկատներից մեկի պաշտպանությամբ ճակատի գծով տրանսպորտ ուղարկել սովետական թիկունքը պարտիզանական միավորումների մատակարարման կենտրոն Օվրուչ քաղաքը զենք, կենսամթերք և ձմեռային հանդերձանք ստանալու համար։ Միավորման հրամանատար գեներալ-մայոր Նաումովի անձնական ընտրությամբ, այդ պատասխանատու խնդրի կատարումը առաջադրվում է Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատին։ Դրա համար նախ և առաջ անհրաժեշտ էր հավաքել սայլեր, սահնակներ, ձիեր, ճանապարհի համար կենսամթերքներ և այլն։ Որոշվեց այդ անհրաժեշտ միջոցները վերցնել ուկրաինական նացիոնալիստներից, բուլբովականներից և բենդերովցիներից։

Միկոյանի անվան ջոկատը կազմակերպված ձևով անցնելով Սլուչ գետը, գլխովին ջախջախում է Բիստրիչա, Մակվինա և Վուլկի-Խլոպսկի գյուղերում տեղավորված ուկրաինական նացիոնալիստների խմբերին, որոնք, ծախված լինելով Հիտլերին, զենքը ձեռքերին բնաջնջում էին սովետական բնակչությանը, ավերում էին շեն Ուկրաինան։ Երեք օր անող համառ մարտերում, Միկոյանականները փայլուն հաղթանակ տարան. թշնամին մարտի դաշտում թողնելով 40 դիակ և շատ վիրավորներ, ցիր ու ցան եղավ։ Օպերացիան ավարտելուց հետո ջոկատը հարուստ ավարով՝ անհրաժեշտ քանակությամբ ձիերով, սայլերով և կենսամթերքներով վերադառնում է միավորումը։

* * *

1943 թ. դեկտեմբերի 26-ին, Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը Բրոնիսլավկա գյուղից դուրս գալով, ուղարկվում է սովետական թիկունքը՝ զենք ու սպառազինություն բերելու։ Միավորման հրամանատար գեներալ-մայոր Նաումովը, կոմիսարի հետ միասին, ամբողջ հինգ կիլոմետր ուղեկցում են հայկական ջոկատին։ Սրտառուչ կերպով հրաժեշտ տալով իր ռազմիկներին, Նաումովը ջերմորեն սեղմում է բոլոր հրամանատարների և քաղաշխատողների ձեռքը, հայրաբար համբուրում ջոկատի հրամանատար Հովսեփյանին, կոմիսարին և գիմելով ամբողջ անձնակազմին, ասում է. «Ես լավագույն ջոկատին և լավագույն սպաներին ուղարկում եմ այս առաջադրանքը կատարելու, որի կարևորությունը դուք հրաշալի կերպով հասկանում եք։ Տխուր կլինի ինձ համար առանց ձեզ, բայց ես հավատացած եմ, որ Միկոյանի անվան ջոկատը

և նրա հրամանատարությունը այստեղ ևս կհետևեն իրենց քաջարի դորամասի մարտական տրադիցիաներին»։

Ութսուն սայլից բաղկացած գումակով, ջոկատը, 40 կիլոմետր դիշերային վտանգավոր և դժվարին երթից հետո, կանգ է առնում այրված գյուղի մոխիրների վրա հանգստանալու։ Հանդստից հետո անցնելով թշնամու գորքերի խիստ հսկողության ենթակա տերիտորիայով, որն ամբողջապես վերածված էր պաշտպանության բնագծերի, ջոկատը քողարկված կերպով դուրս է գալիս Կիև—Կովել մագիստրալի Բելոկորովիչի և Օլեսկ քաղաքների միջև երկաթուղագծի շրջանը, որտեղից և այդ ժամանակ անցնում էր գերմանա-սովետական ռազմաճակատի գիծը։ Հիտլերականները ամբողջ գծի ուղղությամբ, անցուղիների մոտ, կառուցել էին գոտեր, խրամատներում տեղավորված էին գնդացիրներ և ականանետներ՝ իրենց անձնակազմերով։

Ջոկատի հետախուզությունը գիշերվա խավարում 36 ժամ շարունակ փնտրում էր երկաթգիծն անցնելու համար անցուղի. օր ու գիշեր գծի վրա շրջագայող գրահագնացքը խիստ խանգարում էր ջոկատի գումակի անցմանը։ 1943 թ. դեկտեմբերի 31-ին վերջնականապես որոշվեցին անցման տեղերը։ Նոր տարվա գիշերվա ժամը 12-ից անց 30 րոպեին, առաջին վաշտի պաշտպանությամբ, ջոկատի հետևակն ու գումակը սկսեցին առաջ շարժվել։ Բեռ գումարտակը չէր հասել քանդված երկաթգծին, երբ քողարկված թշնամին սկսեց ամեն տեսակի զենքերից փոթորկալի կրակ թափել գիծն անցնող սայլերի և հետևակի վրա։ Չորս կողմից թռչում էին լուսատու գնդակները, աջ ու ձախ պայթում էին ականները, հողը դղրդում էր աղմուկից, բազմաթիվ գնդացիրներից արձակած գնդակները մահ էին սփռում չորս կողմը։ Այդ բարդ իրադրության մեջ, հայ պարտիզանները, առանց շփոթվելու, պայթած արկերից անցուղու վրա փշրված սայլերի և սպանված ձիերի դիակներից ճանապարհը մաքրելով, առաջ էին շարժվում։ Անցումը պաշտպանող վաշտի մարտիկները գնդացրային մրրկային իրենց կրակով հիտլերականներին չէին թողնում գծին մոտենալու, մթության մեջ կողմնորոշվելով, սրընթաց գրոհով նրանք ներխուժում էին հակառակորդի գոտերը, ճնշում ականանետների և գնդացիրների կրակը։ Առավոտյան կողմը անցումն ամբողջապես ավարտվեց։ Թոթ օր ու գիշեր անընդհատ մարտերով, նվաղագույն կորուստներ կրելով. Միկոյանի անվան ջոկատը կարճատև հանգստի կանգ առավ, թաքնվեց ռազմաճակատի գծի մոտ, ճահիճներում։ Դուրս գալով սովետական թիկունքը, 1944 թ. հունվարի 1-ին ջոկատը իր ամբողջ կազմով ժամանեց Օվրուչ քաղաքը։

Սովետական թիկունք հասնելով, ջոկատի հրամանատար Հովսեփյանը Կարմիր Բանակի հրամանատարությանն է ներկայացնում Նաումովի միավորման կողմից իրեն տրված վկայագիրը հետևյալ բովանդակությամբ. «Սույնը ներկայացնող Ա. Մ. Հովսեփյանը իրոք հանդիսանում է Սովետական Միության Հերոս, գեներալ-մայոր Նաումովի Ուկրաինական պարտիզանական միավորման Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատի հրամանատարը։ Համաձայն Ուկրաինական պարտիզանական շարժման շտաբի պետական անվտանգության կոմիսար ընկ. Ստրոկաչի կարգադրու-

[1] ՀՍՍՌ Գիտ. Ակադ. Պատմ. Ինստիտ. Հայր. պատ. պատմ. Կաբինետի արխիվ։ Փաստ 6-րդ, գ. 208, էջ 22։

թյան, ուղարկվում է Օվրուչ քաղաքը 280 մարդուց բաղկացած խումբ և 80 սայլերով, միավորման համար զենք, զինամթերք, ռադիոկայան և ռադիոմարտկոց (батарея) ստանալու համար...»։

Մի քանի օրվա ընթացքում հաղթահարելով մի շարք տեխնիկական դժվարություններ, ջոկատն իր ամբողջ կազմով հաջողությամբ վերադառնում է դեպի պարտիզանական միավորումը, բերելով անհրաժեշտ քանակությամբ զենք և զինամթերք, փայլուն կերպով կատարելով իրեն վրա դրված դժվարին, բայց պատվավոր առաջադրանքը։

Հպարտ էին հայ պարտիզաններն իրենց պատվավոր կոչումով։ Հայրենիքի ազատության ազնիվ զղացմունքներով լցված, նրանք պայքարում էին թշնամու դեմ, փայփայելով մոտակա հաղթանակի հավատը և ապագա խաղաղության բերկրանքը։

* * *

1944 թ. հունվարին Նաումովի պարտիզանական միավորումը ուրիշ մի շարք պարտիզանական միավորումների հետ միասին, ուկրաինական պարտիզանական շարժման շտաբից առաջադրանք ստացավ դուրս գալու 1939—1941 թվերի սովետական-գերմանական սահմանագիծը, պարտիզանական պայքարի դրոշը բարձրացնել օկուպացված այն տերիտորիաների վրա, ուր դեռես պարտիզանները բոլորովին չեն եղել, կազմալուծել թշնամու դիմադրությունը, դրկել նրան դեպի ռազմաճակատի գիծը համալրումներ ուղարկելու հնարավորությունից։

Անհրաժեշտ նախապատրաստություններից հետո 1944 թ. հունվարի վերջերից միավորումը սկսեց շարժվել դեպի արևմուտք։ Սլուչ գետից 70 կիլոմետրի վրա միավորման զորամասերը հանդիպեցին վերադարձող պարտիզանական մի շարք միավորումների հրամանատարներին, որոնք անհնարին էին համարում ֆրոնտի այդ տեղամասերում գործել թշնամու թիկունքում։ Ինչպես հայտնի է այդ մարշրուտով, որն ստացավ «Ստալինյան ռեյդ» անունը, առաջին անգամ գնացել էր Սովետական Միության կրկնակի հերոս գեներալ-մայոր Կովպակի միավորումը։ Նրանից ետ չմնաց նաև Նաումովի միավորումը, որն իր խիզախներով ջախջախելով թշնամու բազմաթիվ կայազորները, ղորքերի խմբավորումները, դուրս եկավ Լվովի նահանգի արևմտյան սահմանագիծը։ Հակառակորդը ամենուրեք կատաղի դիմադրություն էր ցույց տալիս, ձգտում էր ամեն գնով կասեցնել պարտիզանների երթը։ Այդ կարգով արտասովոր մարտեր ծավալվեցին Լվով—Գերեմիշլ երկաթուղագծի վրա Ցարոսլավ-Ռավա-Ռուսկայա և ապա Բրոդ քաղաքների շրջաններում։

Ինչպես միշտ, երրորդ ռեյդում նույնպես, Միկոյանի անվան ջոկատը փայլում էր իր հերոսությամբ։ Այդ ծանր ռեյդի ամբողջ ընթացքում նա հանդիսացավ գեներալ-մայոր Նաումովի ամենահուսալի հարվածող բռունցքը։ Առանձին սիրով փայփայելով հայ պարտիզաններին, նա հիացմունքով և հպարտությամբ մշտապես ընդգծում էր՝ «Միկոյանի անվան ջոկատը փառաբանվում է ոչ միայն այն բանի համար, որ լավ է հարվածում գերմանացիներին, այլ նաև նրա համար, որովհետև նա Ուկրաինայում, մեր Սովե-

տական Հայրենիքի համար պայքարող ազգային միակ պարտիզանական ջոկատն էր[1]։

Դեպի արևմուտք միավորման մարտական երթի առջևից էր գնում Միկոյանի անվան ջոկատը։ 1944 թ. փետրվարի 1-ից ջոկատը առաջին մարտը տվեց Վորոտնև գյուղում, որից հետո ճարպիկ տեղաշարժերով, 13 օրվա համառ առաջշարժումով, միավորման մյուս ջոկատների հետ միասին, հասավ Պերեմիշլ-Լվով երկաթգծին։ Այդ երթում հերոսի մահով զոհվեց ջոկատի շտաբի պետ ավագ լեյտենանտ Լորաչ Ֆեոդոր Պավլովիչը։

Այդ շրջանում Լացկա կայարանի մոտ ջոկատը կայծակնային արագությամբ գրոհեց թշնամու վրա, որն զբաղված էր նոր ժամանած զինվորական էշելոններ դատարկելով. հիտլերականները մեծ կորուստներ կրեցին, իսկ Միկոյանականները գրավեցին ռազմամթերքի հարուստ պաշար։

Պարտությունից կատաղած, վիրավոր գազանի նման, գերմանացիները Լվովի մարզում եղած բոլոր կայազորներին ոտքի հանեցին, մեծ ուժեր դուրս բերեցին Նաումովի միավորման դեմ. ամեն կողմից սկսեցին հետապնդել պարտիզաններին։ Պարտիզաններն ստիպված էին օր ու գիշեր համառ մարտեր մղել թշնամու գերազանց ուժերի դեմ և այդպես առաջ շարժվել, իրենց կողմն ունենալով բնակչության բացարձակ համակրանքը և սերը։

Պերեմիշլ-Լվով երկաթգիծն անցնելու մոմենտին, ջոկատի հետ էր առաջ շարժվում միավորման հրամանատար Նաումովը։ Զիժկի և Ռուսաաջեչկո գյուղերում թշնամին, ավելի քան 400 գերմանական և հունգարական զինվորներով, հարձակվեց ջոկատի վրա, բայց հանդիպելով Միկոյանականների գնդացիրների տեղատարափ կրակին, սեղմվեց գետնին. մութն ընկնելուց հակառակորդը նոր համալրումներ ստանալով, մոտ է բերում մեծ քանակությամբ հրետանի և ականանետներ։ Վերսկսած մարտի ընթացքում հիտլերականները պարտիզանների վրա բաց են թողնում արկերի կատաղի հեղեղ։ Միկոյանականները համառությամբ պահում են իրենց դիրքերը և միայն գիշերը, հրամանի համաձայն, ետ են քաշվում դեպի Ռուսաաջեչկո գյուղը, բայց այստեղ նույնպես թշնամին ամեն կողմից դարաններ էր սարքել։ Գյուղի ծայրամասերի և կենտրոնի տները այրվում էին, տասնյակ հաստոցավոր գնդացիրներից տեղատարափ կրակ էր թափվում գյուղը մտնող ջոկատի վաշտերի վրա. աստիճանաբար թշնամու օղակը սեղմվում էր միավորման շուրջը։ Այդ կրիտիկական մոմենտին Միկոյանի անվան ջոկատին հանձնարարվում է ամեն գնով միջոցներ ձեռք առնել ճանապարհ բաց անելու միավորման համար։ Անցնելով առաջադրանքի կատարմանը, ջոկատի հրամանատար Հովսեփյանը անձամբ առաջնորդելով իր մարտիկներին, իր վաշտերի փոխգործողությամբ, անծանոթ տեղանքում չորս անգամ ենթարկվելով թշնամու շատ ուժեղ գրոհներին, լուսաբացին ճեղքում է թշնամու օղակումը և հնարավորություն է ստեղծում միավորման համար ետխաղացում կատարելու Պերեմիշլ-Լվով երկաթուղագծից ետ, դեպի հյուսիս-արևելք։ Այդ ժամանակվանից սկսած հակառակորդը հետևակային, դրահատանկային և ավիացիոն մեծ ուժե-

1 ՀՍՍՌ ԳԱ Պատմ. ինստ. Հայրեն. պատեր. պատմ. Նարինեաի արխիվ՝ Ֆոնդ 6-րդ, գ. 298, էջ 1։

րով սկսում է կրնկակոխ հետապնդել միավորմանը, նրան ոչնչացնելու ցանկությամբ։ Այս շրջանում Ռուվա-Ռուսկայայի մոտերքում Միկոյանի անվան ջոկատը արյունահեղ մի շարք մարտերում ծանր կորուստներ է ունենում։ Նարոլ գյուղի փողոցներում համառ կռվի ժամանակ հերոսի մահով զոհվում են մարտերում աչքի ընկնող հերոսներ, ջոկատի պարտկազմակերպիչ Ժորա Բաղդասարյանը և առաջին վաշտի ջոկի քաղղեկ Սուխարիչ Հարությունյանը։ Թշնամուն այս անգամ ևս չհաջողվեց շրջապատել և ոչնչացնել հերոսական ջոկատին։

Միավորումը շարժվում է դեպի արևելք։ Այդ օրերին նրանք անվերջ մարտերի մեջ էին։ Հասնելով Կապիչ-Վոլյա գյուղը, պարտիզանները դարձյալ ընկնում են թշնամու վաղօրոք սարքած դարանների մեջ։

Ինչպես հայտնի դարձավ, գերմանացիները որոշել էին պարտիզանների ջարդ կազմակերպել Բուգի մատույցներում, որի համար մեծ ուժեր էին կենտրոնացրել և ամենուրեք դարաններ սարքել պարտիզանների շարժման ճանապարհներին։ Անհրաժեշտ էր ճեղքել թշնամու այդ ամրությունները, Բուգի կամուրջով անցնել գետի արևելյան ափը։

Այս անգամ գեներալ-մայոր Նաումովը անձամբ ինքն անցնելով Միկոյանի անվան ջոկատի գլուխը, որը դարձյալ ընթանում էր ավանգարդում, գրոհի առաջնորդեց մարտիկներին, նպատակ ունենալով ջախջախել և դուրս գալ թշնամու դարանների շրջանից և թեկուզ մի որոշ ժամանակով կտրվել թշնամու հետապնդումմերից, միավորման ուժերը վերախմբավորելու համար։

Միկոյանի անվան ջոկատի ետևից էին գնում միավորման ամբողջ գումակը, հեծելազորը և մնացած ջոկատները։ Միկոյանականները քաջ գիտեին, որ միավորման ամբողջ բախտը կախված է իրենց հաջող գործողություններից։

Կատարելով միավորման հրամանատարի մարտական առաջադրանքը, պարտիզանները արհամարհելով թշնամու կատաղի դիմադրությունը և տեղատարափ կրակը, անտառից դուրս եկան բացատը։ Երբ հուժկու ուռայով առաջ անցան Միկոյանականները, մյուս բոլոր ջոկատները հետևեցին նրանց, թշնամին չդիմանալով, փախուստի դիմեց, և հաջողությամբ ցրիվ տրվեցին թշնամու դարանները։ Մյուս օրը 1944 թ. մարտի 9-ին, ջոկատը Բուգ գետի վրայով անցնող երկաթուղային կամուրջի վրա գերմանական օդանավերի և զրահագնացքի դեմ կարճատև մարտեր մղելուց հետո, ամբողջ միավորումը հաջողությամբ փոխադրվում է Բուգի մյուս ափը։

Միաժամանակ կտրվելով թշնամու հետապնդումից, միավորումը տեղավորվում է Մոնաստիրեկ, Ստանիսլավչիկ, Զբրոյե և Տուրզե գյուղերում։ Մերձֆրոնտային այդ շրջանում Միկոյանի անվան ջոկատը զբաղվեց մի շարք դիվերսիոն խոշոր գործողություններով, պայթեցրեց կամուրջներ, ավերեց կապի միջոցները և կոմունիկացիաները։ Մարտի 12-ին և 14-ին, տեղի նացիոնալիստների մատնությամբ, ջոկատը ենթարկվում է մինչ 50 ֆրոնտային օդանավերի ինտենսիվ ռմբակոծման, նրանից հետո թշնամին մոտ է քաշում հետևակի մեծ ուժեր՝ 15 տանկի, 2 զրահամեքենայի, հրետանու և 6 փողանի ականանետների ուղեկցությամբ անցնում է հարձակման։ Անիմաստ համարելով դիմադրությունը, Միկոյանի անվան ջոկատը առանց մարտն ընդունելու, միավորման հետ միասին, ճարպիկ տեղաշարժերով հեռանում են այդ վայրից և մոտենում Բրոդ քաղաքին։

1944 թ. մարտի 20-ին Ուկրաինական Առաջին Ռազմաճակատի զորքերը ջախջախելով թշնամուն, շարժվում էին Ձերնովիցի, Գրոսկուրովի և Տարնոպոլի վրա։ Լվովի ուղղությամբ գեներալ Գուիտովի զորքերը մոտեցել էին Բրոդ քաղաքին և համառ մարտեր էին սկսել թշնամու համառորեն դիմադրող ուժերի դեմ։ Այդ նույն ժամանակ Բրոդի շրջակայքում էր գտնվում Նաումովի պարտիզանական միավորումը, որը որոշում էր ընդունել թիկունքից հարված հասցնել նահանջող թշնամու զորքերին և օգնել Կարմիր Բանակին առաջ շարժվելու։

Միկոյանի անվան ջոկատին հանձնարարվեց կտրել թշնամու Բրոդից հյուսիս և հյուսիս-արևմուտք նահանջի ճանապարհները։ Եվ անցնելով առաջադրանքի կատարմանը, ջոկատը իր վաշտերով ներփակում է Բրոդի երկաթուղային կայարանում ռազմական բեռների և ռոնի կերպով սովետական խաղաղ բնակչությանը Գերմանիա էվակուացնելու համար կանգնած հինգ էշելոնները։ Երեկոյան, ինչպես որ պայմանավորված էր Կարմիր Բանակի հրամանատարության հետ, պետք է սկսվեր Բրոդի գրավման համատեղ հարձակումը։ Ժամը 17-ին հնչում են տանկային զորքերի գեներալ-մայոր Գուիտովի հրետանու առաջին համազարկերը Բրոդի խճուղու վրա և «Ձերվոննի» կոչվող ջոկատն անմիջապես մարտի մեջ է մտնում գերմանական պահակախմբի դեմ։ Նույն րոպեին կայարանից դեպի Լվով են շարժվում սովետական հրետանու հարվածներից փախչող դատարկ վագոններից կազմված գերմանական էշելոնները, նրանց հետևում է նաև զրահագնացքը։ Կամուրջի վրա Միկոյանի անվան ջոկատի երկրորդ վաշտի մարտիկները բոլոր տեսակի զենքերից տեղատարափ կրակ են արձակում հիտլերականների վրա, ձեռքի նռնակներով հրդեհում են կամուրջի տակից անցնող մեկ էշելոն, շարքից դուրս են բերում զրահագնացքի պլատֆորմայի վրա դրված գնդացիրները, ականանետները և նրանց անձնակազմերը։ կայարանի շուրջը սեղմելով օղակը, Միկոյանականները չեն թույլ տալիս կայարանից դուրս գալու մնացած երկու էշելոններին։ Այդպիսով ազատագրում են 400 սովետական խաղաղ քաղաքացիների, որոնց հիտլերականները մահվան սարսափի տակ վագոնները խցկելով, ցանկանում էին տարկություն քշել դեպի Գերմանիա։ Պարտիզանները Բրոդում անձնուրաց կերպով կռվում էին սովետական և գերմանական բանակների խոշոր ուժերի և նրանց հզոր զենքերի փոթորկվող երկկողմանի կրակների մեջտեղում։

Մարտի 21-ին պարզվեց, որ օպերատիվ իրադրությունը փոխվել է։ Կարմիր Բանակի կողմից Բրոդի գրավումը այդ օրը տեղի չունեցավ։ Պարտիզանները փորձեցին իրենց ուժերով գրավել քաղաքը, բայց հետախուզությունը տեղեկացրեց, որ թշնամու դիրքերը շատ նպաստավոր են և այդ հնարավոր չէ։

Մարտի 21—22-ի ամբողջ գիշերը թշնամին նորանոր գրահատանկային և հետևակի ուժեր էր բերում Բրոդի պաշտպանության համար։ Պարտիզանական միավորումը չունենալով անհրաժեշտ ռազմամթերք՝ թիկունքում մարտերը շարունակելու համար, մարտի 22-ի գիշերվա ժամը 23-ին հրամանատարության առաջադրանքով Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը միավորման մյուս ջոկատների հետ միասին դուրս գալով պաշտպանության իրենց դիրքերից, անցնում են դեպի սովետական թիկունքը և միանում Կարմիր Բանակի զորամասերին։

Դրանով ավարտվում են Սովետական Միության Հերոս գեներալ-մայոր Նաումովի միավորման Միկոյանի անվան պարտիզանական հայկական ջոկատի մարտական գործողությունները Թշնամու թիկունքում։

Ցոթ ամիս շարունակ, գիշեր ու ցերեկ, սառնամանիքների ու անձրևների տակ անասելի զրկանքներ կրելով, հայ պարտիզանները Կիևի, Ժիտոմիրի, Գովելի, Լվովի, Լյուբլինի մարզերում հերոսաբար ավելի քան 25 խոշոր մարտեր մղեցին գերմանական օկուպանտների դեմ։

Ոչ լրիվ տվյալներով (որովհետև գործողությունները մեծ մասամբ կատարվում էին գիշերները), Միկոյանի անվան ջոկատը ոչնչացրել է 800 հիտլերական, ջախջախել է չորս կայազոր, զինվորական մեկ էշելոն, 23 կապի և ռազիոյի հանգույց, ոչնչացրել է 6 տանկետկա, 21 կամուրջ, 13 ավտոմեքենա, մեկ ավտովերանորոգման արհեստանոց, մեկ յուղի գործարան, 9000 լիտր սպիրտ, ոչնչացրել և մասամբ ավար է վերցրել 11 գնդացիր, 9 ավտոմատ, 118 ձի, 54 գումակ, 87 ականանետ՝ ականներով, 12 կիլոմետր հեռախոսագիծ, 53.000 փամփուշտ, զինվորական հանդերձանք, 6 պահեստ, օկուպանտներից խլել և բնակչությանն է բաժանել 10 տոննա ալյուր, գերությունից ազատել է 400 սովետական խաղաղ բնակիչների։ Մարտերի ընթացքում ջոկատը կորուստներ է ունեցել ընդամենը 169 մարդ (61 սպանված, 69 վիրավոր, 39 անհետ կորած)։

1943 թ. սեպտեմբերի 16-ից մինչև 1944 թ. մարտի 22-ը Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը, համալրումներով մեկտեղ, իր շարքերում ունեցել է ընդամենը 325 մարդ։

Հայ պարտիզաններն իրենց գործունեությամբ սովետական հայրենասիրության հրաշալի օրինակ ցույց տվին Ուկրաինայում, որի համար ուկրաինական հերոս ժողովուրդը երախտագիտության խոր զգացմունքով է լցված դեպի եղբայրական հայ ժողովուրդը։ «Եթե մենք գնահատում ու հարգում ենք նրանց, ովքեր վտանգի ենթարկելով իրենց կյանքը, հերոսաբար պաշտպանում էին անմիջականորեն իրենց տունը, իրենց օջախն ու ընտանիքը,—ասում է Նավատորմի ծովակալ Իսակովը Հայրենական պատերազմի մասնակից հայ ռազմիկների մասին,—ապա էլ ավելի պետք է սիրենք ու ըստ արժանավույն գնահատենք նրանց, ովքեր առանց երկար մտածելու, արյունահեղ մարտերի մեջ էին մտնում իրենց տնից երկու-երեք հազար կիլոմետր հեռու եղբայրական ռեսպուբլիկաների հողում՝ պաշտպանելով ընդհանուր գործը, ընդհանուր ունեցվածքը։ Ահա սա է հայրենասիրության բարձրագույն ձևը, սովետական հայրենասիրությունը, որով մեզ դաստիարակել են Լենինն ու Ստալինը։ Սա նույնպես անխախտ է, ինչպես այն, որ ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների և Միության մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հերոսությունը կատարվում էր հանուն հաղթանակի, ընդդեմ ընդհանուր թշնամու, ի երջանկություն բոլորի, այդ թվում նաև հանուն հայ ժողովրդի անկախության և ազատության»։[1]

---

1 Ի Ս Իսակով—«Հայ ծովայինները հայրենական մեծ պատերազմում», Երևան, 1946 թ., էջ 18։